Հայաստանի Հանրապետություն

Լոռու մարզ

Լեռնանցքի համայնքապետարան

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ. Լեռնանցք 8 փ. Շենք 64
հեռ. 093 32 22 39
E-mail: lernancq@mail.ru

№LՄ/Լ2025/119

«28» 12 2016 թ.

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ավագանու թիվ 30, 31-Ն, 32-Ա, 33-Ա, 34-Ա, 35-Ա որոշումները և համայնքի 2017-2021թթ. սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը:

Առդիր 28 թերթ:

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«23» 12 2016թ.

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. 2ենք թիվ 6/4
հեռ. 093 - 32 - 22 - 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 30

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով, Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Լեռնանցք համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 23-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

Լեռնանցք համայնքի ավագանու 2016թ-ի դեկտեմբերի 23-ի նիստի

1. Լեռնանցք համայնքի 2017-2021թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին:
2. Լեռնանցք համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
3. Գույքը մուտքագրելու մասին:
4. Լեռնանցք համայնքի ղեկավարին կից խորհուրդի փոփոխված կազմը հաստատելու մասին:
5. Լեռնանցք համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի փոփոխված կազմը հաստատելու մասին:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Առաքելյան Արամ			
Գևորգյան Արշալույս			
Մանուկյան Էդիկ			
Չախոյան Արսեն			
Վարդանյան Սամվել			
Վիրաբյան Կարեն			
Յուրիկ Օհանյան			

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«23» 12 2016 թ.

Հասցե՝ 1810, Լոռու մարզ.
գ.Լեռնանցք 8 փ. շենք 6/4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@gmail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 31-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Լեռնանցք համայնքի ավագանին.

Որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման սոցիալ-տնտեսական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝ Կողմ Դեմ Ձեռնպահ

Առաքելյան Արամ

Գևորգյան Արշալույս

Մանուկյան Էդիկ

Չախոյան Արսեն

Վարդանյան Սամվել

Վիրաբյան Կարեն

Յուրիկ Օհանյան

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Արզարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«23» 12 2016 թ.

Հասցե՝ 1810, Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@gmail.ru

ՈՐՈՇՈՒՄ թիվ 32-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ մասով.

Ավագանին որոշեց

1. Հաստատել Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ղեկավարի հրամանով կազմված սեփականության ամենամյա գույքագրման հանձնաժողովի կողմից անցկացված ամենամյա գույքագրման արդյունքում կազմված փաստաթղթերը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Առաքելյան Արամ			
Գևորգյան Արշալույս			
Մանուկյան Էդիկ			
Չախոյան Արսեն			
Վարդանյան Սամվել			
Վիրաբյան Կարեն			
Օհանյան Յուրիկ			

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Արզարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«23» 12 2016թ. հհտ. 093-32-22-39

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 33-Ա

ԳՈՒՅՔԸ ՄՈՒՏՔԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածով.

Որոշում է՝

22 Լոռու մարզի Լեռնանցք համայնքի հիմնական միջոց հանդիսացող գույքի ցանկում մուտքագրել 31 (երեսունմեկ) հատ աթոռ՝ 595.000 (հինգ հարյուր իննսունհինգ հազար) դրամ արժողությամբ:

Ավագանու անդամներ՝ Կողմ Դեմ Ձեռնպահ

Առաքելյան Արամ

Գևորգյան Արշալույս

Մանուկյան Էդիկ

Չախոյան Արսեն

Վարդանյան Սամվել

Վիրաբյան Կարեն

Յուրիկ Օհանյան

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնանցք համայնք, գ. Լեռնանցք
հեռ. 093-32-22-39

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» դեկտեմբերի 2016 թվականի N 34 -Ա

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԻ ՓՈՓՈԽՎԱԾ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-ին հոդվածով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է.

1. Ստեղծել Լեռնանցք համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հաերային քննարկման, իրականացման և վերահսկման) խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Մարտին Վիրաբյան համայնքի ղեկավարի տեղակալ, խորհրդի նախագահ,
2. Գայանե Վարդանյան աշխատակազմի քարտուղար, խորհրդի անդամ՝ քարտուղար,
3. Սամվել Վարդանյան ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
4. Արսեն Հարությունյան աշխատակազմի համայնքային ծառայող, խորհրդի անդամ
5. Նորիկ Մելոյան համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
6. Արշալույս Գևորգյան ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
7. Արամ Ավագյան համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
8. Էդիկ Մանուկյան ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
9. Ռուպեն Աբգարյան համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)

2. Խորհրդին՝ գործունեությունը իրականացնել համայնքի ավագանու 2013թ. դեկտեմբերի 06-ի «Լեռնանցք համայնքի ղեկավարին կից, Լեռնանցք համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 16-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2014թ. նոյեմբերի 24-ի «Լեռնանցք համայնքի ղեկավարին կից խորհուրդ ստեղծելու մասին» N 20-Ա որոշումը:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Առաքելյան Արամ			
Գևորգյան Արշալույս			
Մանուկյան Էդիկ			
Չախոյան Արսեն			
Վարդանյան Սամվել			
Վիրաբյան Կարեն			
Յուրիկ Օհանյան			

Լեռնանցք համայնքի ղեկավար Լ. Արզարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« 23 » 12 2016թ.

Հասցե՝ 1810 , Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ թիվ 35-Ա

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՓՈՓՈԽՎԱԾ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011թ-ի փետրվարի 24-ի N 164-Ն որոշմամբ և իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով, Լեռնանցք համայնքում ստեղծել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լևիկ Աբգարյան (համայնքի ղեկավար)

Քարտուղար՝ Արամ Ավագյան (դպրոցի տնօրեն)

Անդամներ՝ Լուսինե Մաթոսյան (բուժքույր)

ZIIZ Աշոտ Նալբանդյան (ՍԾՏԳ)

ZIIZ Սիլվա Թորոսյան (ԱԳԲ ավագ տեսուչ)

ZIIZ Արսեն Չախոյան (ավագանի)

ZIIZ Յուրիկ Օհանյան (ավագանի)

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 30.05.2014թ-ի թիվ 06-Ա որոշումը:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Առաքելյան Արամ			
Գևորգյան Արշալույս			
Մանուկյան Էդիկ			
Չախոյան Արսեն			
Վարդանյան Սամվել			
Վիրաբյան Կարեն			
Յուրիկ Օհանյան			

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար Լ.ԱԲԳԱՐՅԱՆ

Հաստատվել է Լեռնանցք համայնքի ավագանու

23.12.2016թվականի թիվ 08 նիստի թիվ 31-Ն որոշումով

Լեռնանցք— 2016 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն, աշխարհագրական դիրք, պատմական ակնարկ 4
3. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ 5
4. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրեր ու միջոցառումներ 7
5. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատական և կանխատեսում 8
6. Համայնքային սեփականություն համարվող շենքերի, շինությունների և հողամասերի օտարման հնգամյա ծրագիր 8
7. Համայնքի սոցիալ տնտեսական զարգացման ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները 9
8. Համայնքի հեռահար նպատակները 10
9. Համայնքի անմիջական նպատակների սահմանում 10
10. Ռազմավարական նպատակը 11
11. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում 11
12. Ռեսուրսների հաշվարկ 12
13. Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մոնիթորինգ 12
14. Լեռնանցք համայնքապետարանի աշխատակազմ 13
15. Հավելվածներ 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք համայնքի 2017-2021 թթ. ինգամյա զարգացման ծրագրի (այսուհետ Ծրագիր) ընդունման նպատակն է սահմանել համայնքի հեռահար նպատակը, որին հասնելու ենք 2021 թվականին, այդ նպատակներին հասնելու ռազմավարությունը և հիմնական գործողությունները, այդ թվում անհրաժշտ ֆինանսական միջոցները, դրանց հայթհայթման աղբյուրները: Ծրագիրը հանդիսանում է համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի գործունեության հիմնական ճանապարհային քարտեզը:

Ինգամյա զարգացման ծրագիրը կազմված է 15 բաժիններից:

ՀԱՄԱՅՔՆԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մեզ հասած տեղեկություններով Լեռնանցք գյուղը հիմնադրվել է 1860-ական թվականներից:

Նրա առաջին բնակիչները եկել են Սպիտակ (նախկին Համամլի) գյուղից, որոնք սերում են Պարսկաստանի Խոյ, Սալմաստ գավառների գաղթականների սերունդներից:

Գյուղը տեղակայված է Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային թեքության ճյուղավորություններից մեկի հովտում, որտեղով ժամանակին անցել է ռազմավարական նշանակություն ունեցող խճուղային ճանապարհը, որը ծառայել է առևտրական քարավանների և ռազմամթերք տեղափոխող սայլերի համար: Այն կառուցվել է ցարական Ռուսաստանի միջոցներով, և ծառայել է Թբիլիսի Երևան կապն ապահովելու համար: Ճանապարհի մասին մեզ տեղեկություններ հասել է դեռևս 1804-1805թթ.-ից:

Գյուղի անունը՝ Լեռնանցք, տրվել է հենց այն պատճառով, որ այս ճանապարհը (Համամլի-Ալագյազ) կտրում-անցնում է Սպիտակի Լեռնանցքով, որի բարձրությունը 2115 մետր է: Գյուղի անունը մինչև 1950-ական թթ. Սպիտակ էր, 1950-ական թթ. գյուղի անունը փոխվեց Լեռնանցքի, իսկ Սպիտակ անունը տրվեց Համամլիին:

Գյուղի հյուսիսային կողմով ձգվում է Բազումի լեռները: Գյուղի միջին բարձրությունը ծովի մակարդակից շուրջ 1700մ է: Գյուղը հարավային, արևելյան և արևմտյան կողմերից շրջապատված է լեռներով, որոնք ունեն հյուսիսային թեքություն, պատած են ալպիական բուսականությամբ, հարուստ են սառնորակ աղբյուրներով, որոնց ջրերով գոյանում է առուն, որը հոսում է գյուղի միջով տարվա ջրառատ ժամանակ ու հասնում Սպիտակի միջով հոսող Չիչխան, ապա Փամբակ գետի ջրերին: Գյուղը ունի բարեխառն կլիմա:

Գյուղի տարածքը թեք է, հանդակները կտրված, մշակվում են հիմնականում ցորեն, գարի խոտաբույսեր, կարտոֆիլ, կաղամբ և այլ բանջարեղեններ: Պտղատու ծառատեսակներից աճում են՝ տանձենի, խնձորենի, ընկուզենի, սալորենի և այլ մրգեր: Գյուղի կենտրոնում է գտնվում Սուրբ Մինաս եկեղեցին, որի հարևանությամբ է գտնվում <<Ծամի աղբյուր>> կոչվող սառնորակ աղբյուրը, որը ծառայում է բնակչության խմելու և ոռոգման հարցերը լուծելու համար: Այժմ այն հուշարձան աղբյուրի է վերածվել՝ նվիրված 1988-ի երկրաշարժի զոհերի ու Ղարաբաղյան ազատամարտում զոհված համագյուղացի ազատամարտիկների պատվին:

Գյուղի եկեղեցին կառուցվել է 1870-ական թթ., որի զանգակատունը կառուցվել է ավելի ուշ՝ 1910թ.: Եկեղեցին երկրաշարժի հետևանքով ավերվել է: 2000 թվականներին համայնքի բնակիչների ջանքերով մասամբ վերանորոգվել է:

Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքով հիմնովին ավերվել է գյուղի շինությունները, ինչի հետևանքները վերացվում են՝ աղետի գոտու վերականգնման

պետական ծրագրի շրջանակներում, ընդորում՝ Նոր-Լեռնանցքը կառուցվում է գյուղից մոտ 1.5 կմ դեպի հյուսիս՝ Սպիտակ տանող ճանապարհի արևմտյան հատվածում՝ Սպիտակ քաղաքի հարևանությամբ: Գյուղի ծիսամատյանով 375 տնտեսություն ունենք, որից միայն 175-ն է բնակվում քարե տներում, մնացած 200 ընտանիքները ժամանակավոր վագոն-տնակներում:

Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

Սոցիալ-տնտեսական իրավիճակ	
1	Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն
2	Ընդհանուր եամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը (%)
3	Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները, հիմնական սպառման շուկաներ
4	Դպրոցական , նախադպրոցական և արտադպրոցական կրթական հաստատություններ
5	առողջապահական հաստատություններ
6	ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ

1. Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 32,1 մլն դրամ:
2. Համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 15%
3. Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները կազմում են

Գյուղատնտեսական տնտեսությունների քիվը – 300, այդ թվում՝
ա. անհատական տնտեսություն – 300

2. Գյուղ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը.	գ/հա (2016թ.)	ծավալները
ա. ցորեն	– 28 ցենտներ	2240
բ. գարի	– 22	1320
գ.կարտոֆիլ	– 200	8000
դ. կաղամբ	-- 500	1000
ե. բանջարաբոստ. կուլտ.	-- 10	30
զ. կաթ	– 1.8	540
է.միս	-- 1.5	
ը. բուրդ	-- 2 կգ	292
թ. ծու	– 260 հատ	278200
ժ. մեղր	– 30կգ	3150
3. Ցանքատարածությունները	– 207 հա	
ա. հացահատիկ	– 140 հա	
բ. կարտոֆիլ	– 40	
գ. բանջարաբոստ. կուլտ.	– 3	
դ. կաղամբ	-- 2	
ե. առվույտ , կորնգան	– 45	
զ. միամյա խոտեր	– 5	
4. Անասնագլխաքանակը, հատ		
ա. խոշոր եղջեր. անասուններ	– 506 գլուխ	
այդ թվում՝ կովեր	– 300	

բ. մանր եղջեր. անասուններ	– 202
այդ թվում՝ մայրեր	-- 146
գ. խոզեր	– 42
այդ թվում՝ մայրեր	– 12
դ. թռչուններ՝	– 1370 թև
այդ թվում հավեր՝	-- 1070
ե. մեղվաընտանիքներ՝	-- 105

Գյուղատնտեսական արտադրանքի սպառման հիմնական շուկա է համարվում Լեռնանցք համայնքը, Սպիտակ և Վանաձոր քաղաքները, իրենց հարակից գյուղերով:

4. Դպրոցական , նախադպրոցական և արտադպրոցական կրթական հաստատություններ

Գյուղն ունի միջնակարգ դպրոց նախատեսված 220 աշակերտի համար, որտեղ սովորում է 171 աշակերտ: Դպրոցն ունի 35 աշխատող, որից 25 մանկավարժ: Ուսուցիչներից 18-ը համայնքի բնակիչներ են, մյուսներիը Սպիտակ և Վանաձոր քաղաքներից: Նոր տիպային դպրոցը կառուցվել է 2007թ. ունի առանձին կաթսայատուն, ջեռուցման համակարգը տիպային է: Դպրոցին կից գործում է նաև նախակրթարան, որտեղ հաճախում է 21 երեխա: Նախակրթարանում կա երկու աշխատող՝ մեկ վարիչ և մեկ դաստիարակ: Դպրոցը չունի մարզադահլիճ, ինչից ելնելով է սպորտային միջոցառումները կատարվում են մարզահրապարակում:

Համայնքը ունի ֆուտբոլի դաշտ, գյուղի երիտասարդները ակտիվ մասնակցություն են ունենում մարզային և շրջանային փուլային մրցումներին:

5. Առողջապահական հաստատություններ

Գյուղում գործում է մեկ բուժ - կետ: 2007թվին տեղափոխվել է դպրոցի մասնաշենք, որը գտնվում է բարեկարգ միճակում: Աշխատում է մեկ բուժքույր, բուժ.կետը ունի համապատասխան գույք և բուժսարքավորումներ: Զգացվում է դեղորայքի խիստ կարիք: Ազգաբնակչության առաջնային կարիքները հոգալու համար գյուղապետարանը իր սուղ միջոցներից տրամադրում է որոշակի գումար՝ դեղորայք ձեռք բերելու համար:

6. Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ

Համայնքի բնակչության 198 ընտանիք գրանցված են ընտանեկան նպաստների համակարգում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

- Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման պետական աջակցության ծրագրի իրականացման աջակցություն, 2017-2021 թվականին Լեռնանցք համայնքում ծրագրի ավարտը:
- 2017-2021 թ.թ համայնքում նախատեսվում է միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատում համագործակցության ներգրավելով ճանապարհաշինարարական կազմակերպությունների:
- Համայնքի ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգում կամ մասնակի վերանորոգում և ջրամատակարարման բարելավում:
- Համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով:
- Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների հասանելիության և մատուցման մակարդակի բարձրացում՝ պետական պատվերի շրջանակներում:
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, արտակարգ իրավիճակներում համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:
- Համայնքում նախատեսվում է համայնքապետարանի և բարերարների օգնությամբ դրենաժների ստեղծում և պահպանություն

2017-2021թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և ՀՀ Լոռու մարզում գործունեություն ծավալող միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները:

Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատական և կանխատեսում

	Եկամուտի տեսակը	2016 փաստ.	2017թ փաստ.	2018թ նախատեսված	2019թ կանխա-տեսում	2020թ կանխա-տեսում	2021թ կանխա-տեսում
	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ	30985,0	32171,0	34984,52	38479,45	43027,39	48630,21
1	ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ	3839,0	3839,0	4260,2	4683,05	5151,35	5666,57
1.1.	Հողի հարկ	1557,0	1557,0	1728,0	1900,8	2090,88	2300,0
1.2.	Գույքահարկ	2210,0	2210,0	2453,0	2698,3	2968,13	3265,0
1.3	Տեղական տուրքեր	72,0	72,0	79,2	83,952	92,34	101,57
2	ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	606,0	676,0	724,32	796,4	876,04	963,64
2.1	Հողի վարձավճարներ	576,0	576,0	616,32	677,6	745,36	819,9
2.2	Այլ ոչ հարկ. եկամուտներ	30,0	100,0	108,0	118,8	130,68	143,74
3	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ	26540,0	27656,0	30000,0	33000,0	37000,0	42000,0

Համայնքային սեփականություն համարվող շենքերի, շինությունների և հողամասերի օտարման հնգամյա ծրագիր

Հ/Հ	Անվանումը	Հող. նշանակություն	Չափման միավոր	Քանակը	Օտարումը ըստ տարիների				
					2017	2018	2019	2020	2021
1	Հողամասեր	տնամերձ	հա	2.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
2	Հողամասեր	հասարակական	հա	0.5	0.2	0.2	0.1		
3	Հողամասեր	վարելահող	հա	5	0.5	0.5	1	1	1.5

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր	Հնարավորություններ	Սպառնալիքներ
Համայնքն ունի մեծ աշխատանքային ռեսուրսներ	Ներդրումների անբավարար մակարդակ	Համայնքի աշխարհագրական դիրքը	Աղքատության բարձր մակարդակ
Գազաֆիկացման համակարգի առկայություն	Գազի սպառման ցածր մակարդակ	Համայնքի շուրջորյա կապը մարզկենտրոնի հետ	Գործազրկության բարձր մակարդակ
Բոլոր բջջային կապերի և ինտերնետ համակարգի հասանելիություն	Համայնքը սակավահող է	19-րդ դարի կառուցված եկեղեցի, Սրբատեղերի առկայություն	Սոցիալ-տնտեսական անորոշություն
Փողոցային լուսավորություն	Թույլ է համայնքապետարանի նյութատեխնիկական բազան	Երկրաշարժի զոհերին և զոհված ազատամարտիկներին նվիրված խաչքար	Տարածքի սեյսմիկ անկայունություն
Ժամանակակից կրթական պայմաններին համապատասխանող դպրոց, ապահովված բարձր որակավորում ունեցող մանկավարժներով	Մշակույթի տան և մարզադահլիճի բացակայություն, մսուր-մանկապարտեզի բացակայություն	1941-1945թթ հայրենական պատերազմի զոհվածների հիշատակին նվիրված հուշարձան, 1988թ երկրաշարժի զոհերին նվիրված հուշարձան	Բնական աղետներ
Աղբահանության պատշաճ կազմակերպում	Խմելու ջրի համակարգը ունի բարելավման կարիք 30%	Համայնքը ունի բազմաթիվ սառնորակ աղբյուրներ	Ջրային ռեսուրսների քանակի նվազում
	Կոյուղիների բացակայություն		
	Ֆինանսական այլընտրանքային միջոցների ռեսուրսների բացակայություն		

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՌԱՀԱՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Վերացնել 1988թ.-ի երկրաշարժի հետևանքները, վերականգնել համայնքի սոցիալ – տնտեսական պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ, մաքուր և գրավիչ բնակավայր:

Բարեփոխումներ կատարելով, նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝

- Աղետի հետևանքով անօթևան մնացած 45 ընտանիքներին բնակարանով ապահովում, երկրաշարժից հետո բնակչությունը աճել է, կան 75 նորաբաժան ընտանիք, որոնք երկրաշարժի ժամանակ տուն չեն կորցրել և այժմ բնակվում են վագոն տնակներում և ընդգրկված չեն բնակարանաշինության ծրագրում:
- Աշխատատեղերի ստեղծում:
- Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում:
- Կառուցել մարզադահլիճ:
- Կառուցել մշակույթի տուն:
- Համայնքի Սուրբ Մինաս եկեղեցու վերակառուցում:
- Գազաֆիկացման ընդլայնում համայնքում:
- Խմելու ջրատարի ներքին ցանցի բարելավում:
- Ոռոգման համակարգի 12 կմ հատվածի կառուցում:
- Դրենաժների պահպանում:
- Բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում:
- Համայնքի փողոցների բարեկարգում:
- Ինարավորության սահմաններում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ծրագրի իրականացում, համայնքի սեյսմիկ քարտեզի ստեղծում

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

1. Աղետի գոտու հետևանքների վերացում.
2. Խմելու ջրերի քանակի ավելացում
3. Համայնքի փողոցների բարեկարգում
4. Համայնքի հիմնական ճանապարհի վերանորոգում
5. Գյուղատնտեսության զարգացում (հակակարկտային կայանների տեղադրում, գյուղտեխնիկայի ձեռքբերում, բարձրորակ սերմերի ձեռքբերում և այլն)

Ռազմավարական նպատակը

Ֆոնդահայթհայթման և լրացուցիչ ռեսուրսներ ներգրավելու, ինչպես նաև բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային պայմանները, համայնքը դարձնել բարեկարգ, գեղեցիկ, զարգացած և գրավիչ բնակավայր, ունենալ զարգացած գյուղատնտեսություն: Համայնքում պայմաններ ստեղծել գյուղատնտեսական արտադրանքի իրացման դժվարությունները հաղթահարելու համար:

ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

1. Բնակարանաշինություն
2. Մշակույթի տան և մարզադահլիճի կառուցում
3. Միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատում
4. Համայնքի խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարելավում
5. Գյուղատնտեսության զարգացում

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար:

Հիմնահարց	Պատճառ	Հետևանք	Այլընտրան-քային լուծումներ	Պետական մարմին/դոնոր կազմակերպություն
Բնակարանաշինություն	Տիևաեսների բացակայություն	Բնակարանով ապահովում	Անհրաժեշտ է պետական աջակցություն	ՀՀ Կառավարություն Համայնքապետարան Դոնոր կազմակերպություններ **Բարերարներ**
Մշակույթի տան և մարզադահլիճի կառուցում	Տիևաեսների բացակայություն	Մշակույթի խթանում	Անհրաժեշտ է պետական աջակցություն	ՀՀ Կառավարություն Համայնքապետարան Դոնոր կազմակերպություններ **Բարերարներ**

Ճանապարհների ասֆալտապատում	Ֆինանսների բացակայություն	Տնտեսության զարգացման խթանում	Անհրաժեշտ է պետական աջակցություն	ՀՀ Կառավարություն Համայնքապետարան Դոնոր կազմակերպություններ **Բարերարներ**
Համայնքի խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարելավում	Ֆինանսների բացակայություն	Բնակչության ջրով ապահով-վածություն	Անհրաժեշտ է պետական աջակցություն	ՀՀ Կառավարություն Համայնքապետարան Դոնոր կազմակերպություններ **Բարերարներ**
Գյուղատնտեսության զարգացում	Ֆինանսների բացակայություն	Գյուղատնտեսական արտադրանքի ավելացում	Անհրաժեշտ է պետական աջակցություն	ՀՀ Կառավարություն Համայնքապետարան Դոնոր կազմակերպություններ **Բարերարներ**

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

Համայնքում անցկացված ռեսուրսների հաշվարկից պարզ է դառնում հետևյալը՝

Գյուղն ունի 375 ծուխ. որտեղ բնակվում է 1553 բնակիչ. որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 50% - ը: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. երեխաներ (0 – 5 տ) -- 134
2. դպրոցական (6 – 18տ) -- 285
3. 18 – 62 տարեկան -- 952
4. թոշակառուներ -- 208
5. հաշմանդամներ – 65
6. Աշխատունակներ -- 850

Ջրային ռեսուրսները կազմում է – 2.85 հա

Անտառային ռեսուրսները կազմում է – 172,41 հա

Հողային ռեսուրսները կազմում է – 1307,55 հա

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Իրականացման փուլում գտնվող ծրագրերը ենթարկվում են մոնիթորինգի. որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրերի կատարման ընթացքը և անհրաժեշտ փոփոխություններ կատարել: Մոնիթորինգը իրականացվում է համապատասխան

կատարողականի ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և ցուցանիշների փաստացի արժեքները թիրախային արժեքների հետ համեմատելու միջոցով: Համեմատության միջոցով հնարավոր է չափել ծրագրի առաջընթացը, հաջողության աստիճանը, ծրագրով պայմանավորված փոփոխությունները կամ գնահատել ծրագիրն իրականացնողի կատարողականը: Համայնքի կայուն զարգացման և պարտադիր խնդիրների կատարման մասով մոնիթորինգի պլանը կազմվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման զարգացման նախարարության կողմից: Մոնիթորինգային ցուցանիշների մասին տեղեկություններ պետք է հավաքագրվեն կիսամյակային կամ տարեկան կտրվածքով: Մոնիթորինգի հաշվետվությունը համայնքի ավագանուն պետք է ներկայացվի ամեն տարի՝ հաշվետու տարվան հաջորդող տարվա առաջին եռամսյակում:

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ



ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Բնակարանաշինություն»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	2017-2018թթ ընթացքում Լեռնանցք համայնքում կլուծվի աղետի հետևանքով անօթևան մնացած 45 ընտանիքի բնակարանային պայմանների բարելավման գործընթացը և ընտանիքները կապահովվեն բնակարանով:						
Ծրագրի անմիջական նպատակը	Ցուցանիշներ	Եղակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		45 (360 մլն դրամ)	20 բ. (160մլն)	25բ. (200 մլն)			
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Եղակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		210 մլն	90մլն	120 մլն			
	2.						
	Ցուցանիշներ	Եղակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		150 մլն	70 մլն	80մլն			
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Կազմել գործողությունների պլան 1.2.գտնել ֆինանսական միջոցներ 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Կնքել շինարարական կապալի և այլ անհրաժեշտ պայմանագրեր 2.2.Սկսել շինարարական աշխատանքները 2.3.Հետևել շինարարության ընթացքին և որակին 2.4.Ավարտին հասցնել 45 բնակելի տների կառուցապատման աշխատանքները 2.5.Փակել ժամանակավոր կացարանները						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 25 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 335 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 360 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժի ներգրավում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների սղություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Լեռնանցք համայնքում աղետի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ-ի մարտ-2018թ-ի դեկտեմբեր						
Ծրագրի համառոտ նկարագրություն	1988թ-ի երկրաշարժի հետևանքով Լեռնանցք համայնքի 90 տոկոս բնակելի տները քանդվել կամ դրածել էին քանդման ենթակա: Սկսած 1989թ-ից Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվում է աղետի գոտու վերականգնման տարբեր ծրագրեր, որը դեռևս չի ապառվել և բնակարանաշինության ոլորտում ունենք 45 ընտանիք, որոնք երկրաշարժի հետևանքվ դեռևս համարվում են անօթևան և բնակվում են անմխիթար տնակներում: Նախատեսվում է պետական ծրագրի շրջանակներում և ֆինանսական միջոցների հաշվին հետևողականորեն իրականացնել աղետի հետևանքով անօթևան մնացած անձանց բնակարանային պայմանների բարելավում.						

	ոչը ներառում է ժամանակավոր կացարանների բանդման աշխատանքներ: Ծրագրի մեկնարկը կտրվի 2017թ-ի մարտ ամսից և նախատեսվում է ավարտել 2018թ-ի դեկտեմբերին՝ երկու փուլով: Առաջին փուլում կլուծվի այն ընտանիքների բնակարանային պայմանները, ովքեր ունեն առաջնահերթություն կամ բնակարանային պայմանները առավել անմխիթար են: Աշխատանքները կսկսվի հերթացուցակի մշակմամբ և առաջին փուլի հերթացուցակի կազմամբ: Այնուհետև մրցույթով կընտրվի այն շինարարական կազմակերպությունը, ով պետք է կատարի շինարարական աշխատանքներ, կկազմվի և կկնքվի անհրաժեշտ գործարքները: Բնակարանների կառուցման ավարտին կհատկացվի հերթացուցակում ընդգրկված անձանց Կառավարության որոշմամբ հաստատված կարգին համապատասխան: Ծրագրի բյուջեն կկազմի 360 մլն դրամ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Մշակույթի տան և մարզադահլիճի կառուցում»

(Ծրագրի անվանում)

Գարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	2018-2019թթ ընթացքում Լեռնանցք համայնքում մշակույթի տան և մարզադահլիճի կառուցում:						
Ծրագրի անմիջական նպատակը							
	Ցուցանիշներ	Եղակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		2(240մլ)	120 մլն.	120 մլն			
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Եղակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		1 (150 մլն դրամ)	80մլն	70մլն			
	2.						
	Ցուցանիշներ	Եղակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		1(90)	40մլն	50մլն			
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Կազմել գործողությունների պլան 1.2.Գտնել ֆինանսական միջոցներ 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Կնքել շինարարական կապալի և այլ անհրաժեշտ պայմանագրեր 2.2.Սկսել շինարարական աշխատանքները 2.3.Հասնել շինարարության ընթացքին և որակին 2.4.Ավարտին հասցնել կառուցապատման աշխատանքները						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 30 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 210 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 240 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժի ներգրավում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների սղություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Լեռնանցք համայնքի բնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018թ-ի փետրվար-2021թ-ի դեկտեմբ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	1988 թվականի երկրաշարժի հետևանքով քանդվել է Լեռնանցք համայնքի մշակույթի տունը և մարզադահլիճը: 1990 թվականին կառուցվել է ժամանակավոր շինություն, որը օգտագործվել է որպես մշակույթի տուն, սակայն տարիների ընթացքում այն քայքայվել է և դարձել օգտագործման համար ոչ պիտանի, նպատակահարմար չէ նաև դրա վերանորոգումը: Նախատեսվում է գտնել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և Լեռնանցք համայնքում կառուցել մարզադահլիճ և մշակույթի տուն, ինչը ուղղված կլինի համայնքի մարզամշակութային կյանքի զարգացմանը: Ծրագիրը նախատեսվում է սկսել 2017թ-ի փետրվարից և ավարտին հասցնել 2018թ-ի դեկտեմբերին՝ երկու փուլով, որից առաջին փուլում նախատեսվում է իրականացնել ֆոնդահավաքում, անհրաժեշտ իրավաբանական փաստաթղթերի կազմում և գործարքների կնքում, իսկ երկրորդ փուլում իրականացնել շինարարական աշխատանքներ և արդյունքում ունենալ ժամանակակից պահանջներին համապատասխան, այդ թվում անհրաժեշտ զուգարան ապահովված մարզադպրոց և մշակույթի տուն: Ծրագրի բյուջեն կազմում է 240 մլն դրամ:						

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	2017-2019թթ ընթացքում Լեռնանքի միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատում. Հիմնովին վերանորոգում						
Ծրագրի անմիջական նպատակը							
	Ցուցանիշներ	Եղակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		2 (70 մլն)	30 մլն.	25 մլն	5 մլն	5 մլն	5 մլն
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Եղակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		20 մլն	20մլն				
	2.						
	Ցուցանիշներ	Եղակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		50մլն	10 մլն	25մլն	5 մլն	5 մլն	5 մլն
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Կազմել գործողությունների պլան 1.2.Գտնել ֆինանսական միջոցներ 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Մնթել շինարարական թույլտվի և այլ անհրաժեշտ պայմանագրեր 2.2.Սկսել ճանապարհի վերանորոգման և ասֆալտապատման աշխատանքները 2.3.Շնորհել վերանորոգման աշխատանքների ընթացքին և որակի 2.4.Ավարտին հասցնել վերանորոգման և ասֆալտապատման աշխատանքները						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 5 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 65 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 70 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժի ներգրավում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների սղություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Լեռնանքը համայնքի բնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ-ի փետրվար-2021թ-ի դեկտեմբեր						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում ներկայումս գործում է մեկ միջհամայնքային ճանապարհ դեպի Սպիտակ բարձր, որի երկարությունը կազմում է 4 կմ, միջին լայնություն 8 մետր: Ճանապարհը հիմնականում գտնվում է անմխիթար վիճակում, ժամանակ առ ժամանակ կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ, սակայն այն իրեն սպառել է և հիմնանորոգման կարիք ունի: Նախատեսվում է 2017-2021թ-ի ընթացքում իրականացնել միջհամայնքային ճանապարհի հիմնանորոգման և ասֆալտապատման աշխատանքներ, արդյունքում կունենանք ժամանակակից պահանջների բավարարող ասֆալտապատ միջհամայնքային ճանապարհ: Ծրագիրը կիրականացվի երեք փուլով. Առաջին փուլում կիրականացվի ֆոնդահայթայթման և անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման աշխատանքներ, երկրորդ փուլում կիրականացվի ջրահեռացման և հողաթափման աշխատանքներ, երրորդում՝ ասֆալտապատում: Ծրագրի բյուջեն կկազմի 70 մլն դրամ						

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Համայնքի խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարելավում »

(Ծրագրի անվանում)

Գարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	2018-2021թթ ընթացքում Լեռնանցի խմելու և ոռոգման ջրի համակարգի բարելավում						
Ծրագրի անմիջական նպատակը							
	Ցուցանիշներ	Եղակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		2(18 մլն)	6 մլն	4 մլն	4 մլն	3 մլն	1 մլն
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Եղակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		10 մլն դրամ	6 մլն	4 մլն			
	2.						
	Ցուցանիշներ	Եղակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		8			4 մլն	3 մլն	1 մլն
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Կազմել գործողությունների պլան 1.2.գտնել ֆինանսական միջոցներ 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Կազմել ջրային համակարգի քարտեզը և կատարել ջրային համակարգի ներդրման նախագիծ: 2.2.Կազմակերպել Հաղորդման ընկերության հետ բանակցություններ և համագործակցել ընկերության հետ 2.3.Կնքել շինարարական կապալի և այլ անհրաժեշտ պայմանագրեր 2.4.Հետևել ջրային համակարգի կառուցապատման աշխատանքներին						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 3 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 15 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 18 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժի ներգրավում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների սղություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Լեռնանցք համայնքի բնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018թ-ի փետրվար-2021թ-ի դեկտեմբեր						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Լեռնանցք համայնքի տնտեսությունների շուրջ 25% չունի խմելու ջուր: Համայնքն ունի ջրոտատրման թույլտվություն, ուստի նախատեսվում է 2017-2021 թվականների ընթացքում համայնքում իրականացնել խմելու ջրի հաշակարգի նորոգման, նոր համակարգի կառուցման աշխատանքներ, որի արդյունքում խմելու ջրով կապահովվի համայնքի բնակչությունը: Աշխատանքները կիրականացվի երեք փուլով. 1-ին փուլում կիրականացվի ֆոնդահայթայթման աշխատանքներ, 2-րդ փուլում կիրականացվի ջրային համակարգի քարտեզի կազման և նոր համակարգի նախագծման աշխատանքներ, 3-րդ փուլում կիրականացվի շինարարական աշխատանքների կազմակերպում և ավարտ: Ծրագրի բյուջեն կազմում է 18 մլն դրամ:						

ՀԱՎԵԼՎԱԾ 5

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Գյուղատնտեսության զարգացում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	2017-2021թթ ընթացքում Լեռնաների համայնքում գյուղատնտեսության զարգացում						
Ծրագրի անմիջական նպատակը	Ցուցանիշներ	Եղակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		2 (26 մլն)	6 մլն	7.5 մլն	4 մլն	6.5 մլն	2 մլն
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Եղակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		10 մլն	6 մլն	4 մլն			
	2.						
	Ցուցանիշներ	Եղակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		16 մլն		3.5	4 մլն	6.5 մլն	2 մլն
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Կազմել գործողությունների պլան 1.2.գտնել ֆինանսական միջոցներ 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Կազմել գյուղատնտեսության զարգացման համար անհրաժեշտ գործողությունների մանրամասն ծրագիր, ըստ ոլորտների: 2.2.Իրականացնել անհրաժեշտ մեթոդական դասընթացներ համայնքի բնակիչների շուրջ, որն ուղղված կլինի գյուղատնտեսության առանձին ճյուղերի աշխատանքներին ավելի մանրամասն ուսումնասիրությանը և ժամանակակից գիտելիքների յուրացման 2.3. Համայնքի բնակիչներին ուսուցանել գյուղատնտեսությունը որպես բիզնես ոլորտ օգտագործելու և անձնական սպառումից դեպի արտադրության կազմակերպման անցնելուն 2.4.Գտնել գյուղատնտեսական տարբեր կուլտուրաների բարձրարակ և համեմատաբար շուկայականից էժան սերմացուների ներկրման աղբյուրներ 2.5.Իրականացնել գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերմանն ուղղված աշխատանքներ 2.6. Համայնքում տեղադրել երկու հակակարկտային կայան 2.6.Աջակցել համայնքի բնակիչների նոր գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման, դրա համար անհրաժեշտ լիզինգի պայմանագրերի կնքմանը 2.7.Աջակցել բնակիչների գյուղատնտեսական ապրանքների սպառման շուկայի ընդլայնման հարցում, գտնել նոր շուկաներ						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 2 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 17 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 26 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժի ներգրավում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների սղություն, բնակիչների համագործակցության բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Լեռնաների համայնքի բնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ-ի փետրվար-2021թ-ի դեկտեմբեր						

Ծրագրի համառոտ նկարագրություն	Ենոնաձոր համայնքը չնայած նրան, որ սակավահող է բնակչությունը զբաղվում է զուգատնտեսությամբ և անասնապահությամբ: Համայնքի զուգատնտեսական նշանակության հողի 20% չի մշակվում: Բնակչության մեծ մասը զուգատնտեսական նշանակության հողամասերը օգտագործում է եգիպտական իրենց սպառողական արտադրանքի համար: Անհրաժեշտ է բնակչության շրջանում իրականացնել ուսուցողական աշխատանքներ և նրանց աջակցել անձնական սպառման բարիք ստեղծելուց արտադրության անցում կատարելու հարցում, որի իրականացման համար անհրաժեշտ է որոշակի ֆինանսական միջոցների ներդրում, կրթական աշխատանքների կազմակերպում, զուգատնտեսական արտադրության արդյունքում ստեղծված բարիքների սպառման համար անհրաժեշտ շուկաների ընդլայնում, այդ թվում բնակչությանը անհրաժեշտ է աջակցել ոլոգվատելիքի, նոր և բարձրորակ սերմացուների շուկայականից եժան գներով ձեռքբերման աղբյուրներ գտնելու հարցում, ինչպես նաև զուգտեխնիկայի թարմացման աջակցություն: Նախատեսվում է կազմել զուգատնտեսության զարգացման մանրամասն պլան, ինչից հետո գտնել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, համապատասխան ոլորտի մասնագետների օգնությամբ բնակչությանը գիտելիքներ տրամադրել զուգատնտեսության ոլորտում արդի գիտելիքների յուրացման հարցում, այդ թվում արտադրանք կազմակերպելու և զուգատնտեսությունը որպես բիզնես արտադրություն կազմակերպելու հարցում, ինչը կնպաստի աշխատատեղերի ստեղծմանը, կնվազեցնի արտագնա աշխատանքի մեկնողների թիվը: Ծրագիրը կիրականացվի առաջիկա հինգ տարիների ընթացքում, որը կլինի նաև շարունակական: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ գումարն կկազմի 26 մլն դրամ: